Միխայիլ Դուդին



Բանաստեղծ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, Սոցիալիստական աշխատանքի հերոս:

Ծնվել է 1916թ. Ֆուրմանովյան շրջանի Կլեվնեվո գյուղում: Ավարտել է Իվանով քաղաքի տեքստիլ ֆաբրիկայի դպրոցը, այնուհետև սովորել տեղի մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժնում:

Ուսմանը զուգահեռ աշխատել է թերթում: Տպագրվել է 1934թ.-ից: 1939թ.-ին զորակոչվել է ռազմաճակատ, 1942-ից՝ թղթակցել ռազմաճակատային թերթերին: Պատերազմի ավարտից հետո Լենինգրադում (Ս. Պետերբուրգ) աշխատել է «Աշխարհի պաշտպանության կոմիտեում»: Նախաձեռնել է «Փառքի կանաչ գոտի» կոչվող հոշակոթողային համալիրը՝ նվիրված Լենինգրադի պաշտպանների հիշատակին:

Բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Հեղեղ» վերնագրով, լույս է տեսել 1940թ., որին հաջորդել են «Կրակ խաչմերուկում» (1944), «Կամուրջներ. բանաստեղծություններ Եվրոպայից» (1958), «Պատասխանատվության իրավունք» (1977), «Իմ ժամանակի երգերը» (1958) և այլ գրքեր:

Հայտնի է նաև որպես թարգմանիչ. ԽՍՀՄ տարբեր լեզուներով թարգմանել է բազմաթիվ բանաստեղծություններ:

«Ավետյաց երկիր» վերնագրով թարգմանական ժողովածուի հոնորարը 1989թ. նվիրաբերել է Լենինականի (Գյումրի) աղետյալ հայերին:

Մահացել է 1993թ.: